ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
30.05.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՖՈՒԼԵՐ ՏՆԱՇԻՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝			
1.1 Լրիվ անվանումը			«ՖՈՒԼԵՐ ՏՆԱՇԻՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 ՀՎՀՀ-ն			01009537
1.3 Գտնվելու վայրը			ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ 53 ԲՆ. 26
1.4 Պետական գրանցման համարը			211.171.04691
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը			2008-04-03
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)			+(374)10123456
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը			www.fullercenterarmenia.org
1.8 Էլեկտրոնային փոստը			finance@fullercenterarmenia.org
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝			
Անունը	Ազգանունը		Պաշտոնը
ԱՇՈՏ	ԵՂԻԱԶԱՐՅԱՆ		Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը			
Անտոկոս փոխառություններ տրամադրելու միջոցով աջակցել սոցիալապես անապահով տնազուրկ ընտանիքներին կառուցելու սեփական բնակարաններ և կացարաններ			
Կարիքավոր անձանց և ընտանիքների հետ համագործակցելով նպաստել նրանց կողմից պարզ, հարմարավետ և մատչելի տների կառուցմանն ու վերանորոգմանը			
4 Հասարակական կազմակերպության՝			
4.1 Անդամների թիվը			22
4.2 Կամավորների թիվը			14
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը			4

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Անտոկոս փոխառությունների տրամադրում	ՀՀ մարզեր	Տնազրկության կրճատում	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները

1	Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 27 ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների կիսակառույց բնակելի տների շինարարական աշխատանքների կազմակերպում	Լոռու մարզ	Ավարտված	Տնազրկության կրճատում	Ավարտուն տներ

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	472,850,481
8.2 Գույքը	
Ընդամենը	472,850,481

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	100,000,000	Լոռու մարզպետարան
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	100,000,000	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	421,021,602
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		421,021,602

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	589,605,944
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		589,605,944

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____2_____ էջից

էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրություն, անունը, ազգանուն

AVC
Consulting&Audit

ՀՀ, ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: (010) 57 28 46
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048, ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ -02.08.2006թ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳՀ՝ 1 20 0440

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ) պետական կամ համայնքային միջոցների օգտագործման վերաբերյալ պետական մարմիններ ներկայացվող 2022 թվականի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը պատրաստվել է ղեկավարության կողմից կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը:

Մեր կարծիքով, հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության 2022 թվականի դրամական միջոցների մուտքերն ու ելքերը՝ հաշվապահական դրամարկղային հիմունքին համապատասխան:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ՀԿ-ն լուծարելու կամ ՀԿ-ի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե ՀԿ-ի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էականան որոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել ՀԿ-ի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ՀԿ-ին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 մայիսի 2023թ.

Գլխավոր տնօրեն *Մերի Դեմիրոսյան*

Աուդիտոր *Լիզա Սարգսյան*

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.05.2023 17:58